ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 175-ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում ու ԳԱԱ գիտաժողովների տանը 2012 թ. հոկտեմբերի 19–21-ը Արվեստի ինստիտուտը գումարեց երիտասարդ արվեստաբանների գիտական յոթերորդ նստաշրջանը՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյա հոբելյանին:

ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը *բացման խոսքում նշեց. «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հերթական՝ թվով արդեն յոթերորդ նստաշրջանն իր յուրահատկություններն ունի. յուրահատուկ է այն առումով, որ այս անգամ մեր աշխատանքները պետք է անցնեն ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում և մեր եռօրյա միջոցառումը ֆինանսավորվել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից: Իր պատմության մեջ առաջին անգամ մեր նստաշրջանը, իր ընդգրկմամբ, միջազգային է, քանի որ նրա աշխատանքներին մասնակցելու են երիտասարդ արվեստաբաններ ինչպես ԳԱԱ արվեստի ինստիտուտից ու ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախներից՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանից, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայից, Երևանի պետական համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտից, այնպես էլ Ռուսաստանի Դաշնությունից՝ Մոսկվայից ու Նովոսիբիրսկից և Իրանի Իսլամական Հանրապետությունից»:*

Նստաշրջանի մասնակիցներին ողջունեցին ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, *ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ* Գևորգ Վարդանյանը, *ԳԱԱ նախագահության խորհրդական, ակադեմիկոս* Վլադիմիր Բարխուդարյանը:

Եռօրյա նստաշրջանի հինգ նիստերի ընթացքում լսվեցին 40 զեկուցումներ:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս Աննա Ադամյանը *«Հայոց դաշնամուրային անդրանիկ Marche funèbre-ն՝ Տ. Չուխաճյանի «Մահանուագը»« բանախոսության մեջ անդրադարձավ պիեսի ստեղծման պատմությանն ու ճակատագրին, բացահայտեց երաժշտական լեզվի առանձնահատկություններն ու ներկաների ունկնդրությանն առաջին անգամ ներկայացրեց «Մահանուագը»՝ Արմեն Բաբախանյանի կատարմամբ: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող* Մարգարիտա Քամալյանը *«Գառզուի բեմանկարչությունը. «Եղե-*

մից հետո» բալետը» զեկուցման մեջ, հիմնվելով Գառզուի որդու տրամադրած ետնապատառի ու բեմավարագույրի էսքիզների լուսանկարների և Նյու Յորքի Ազգային գրադարանի արխիվների լուսանկարների և նյութերի վրա, առաջին անգամ գիտական հանրությանը ներկայացրեց նկարչի ձևավորումների վերլուծությունը՝ համեմատական անցկացնելով ամերիկահայ բեմանկարիչ Ռուբեն Տեր-Հարությունյանի՝ նույն բալետի համար իրագործած սցենոգրաֆիայի հետ: ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական, արվեստագիտության թեկնածու Մարատ Հայրապետյանն *անդրադարձավ Վահրամ Բաբայանի՝ սոպրանոյի, բարիտոնի, խառը երգչախմբի և նվագախմբի համար 1995-ին գրած, սակայն մինչ օրս չհրատարակված ու չկատարված «1915 թվական» ութմասանի կանտատին: Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Արտավազդ Եղիազարյանը *«Հայկական թեմայով արևմտյան ֆիլմերի ազդագրերը» զեկուցման մեջ շոշափեց XX դարի ընթացքում հայերին վերաբերող թե՛ սփյուռքահայ և թե՛ օտարազգի ռեժիսորների նկարահանած կինոնկարների ազդագրերի թեման, որոնք արտացոլում են դրանցում արծարծվող հարցերը, նաև ներկայացնում նկարիչների պատկերացումները հայ ազգի մասին: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու* Նարինե Սահակյանի *զեկուցումը նվիրված էր Ղազարոս Սարյանի «Երեք պոստլյուդ» դաշնամուրային շարքին: Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Արթուր Ավանեսովը *«Հայ կոմպոզիտորների կամերային գործիքային նոր ստեղծագործությունները» զեկուցման մեջ դիտարկեց XXI դարի առաջին տասնամյակում գրված հայ հեղինակների նոր երկերը՝ քննության առնելով նրանց երաժշտության մեջ տեղ գտած միտումները: Արամ Սաթյանի՝ քսան տարվա տարբերությամբ ստեղծած «Երեք պիես» և «Վեց բագատել» շարքերի մասին էր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ* Անահիտ Մարգարյանի *զեկուցումը: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Արսեն Համբարձումովը *«Կոմպոզիցիայի հարցերը Ա. Էգոյանի ֆիլմերում» բանախոսության մեջ դիտարկեց ռեժիսորի «Էկզոտիկա» (1994), «Փառավոր արքա» (1997) և «Քլոյա» (2009) ֆիլմերը:*

Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու Արեգ Հասրաթյանը *«Արգինայի Կաթողիկեի ճարտարապետական հորինվածքի վերակազմությունը» զեկուցման մեջ անդրադարձավ միջնադարյան Հայաստանի Արգինայի Կաթողիկեին, որից պահպանվել է միայն դրա ավերակների XX դ. սկզբին կատարած լուսանկարները, որոնց հիման վրա էլ բանախոսն իրականացրել է հուշարձանի ծավալատարածական և հատակագծային հորինվածքների վերակազմությունը: Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիային կից ակադեմիական երաժշտական քոլեջի դասախոս* Յուլիա Ծովյանովան *«Հայ ազգային երաժշտական ավանդույթների պահպանումը: Պրոբլեմներ և հեռանկարներ» զեկուցման մեջ դիտարկեց հայ ազգային ավանդույթների որոշ խնդիրներ ու առաջադրեց վերջինիս լուծման համար գիտական*

գրականության ուսումնասիրման և երաժշտակատարողական պրակտիկայի վերլուծության կիրառումը: «Քանդակագործ Բորիս Դիլոյանի աշխատանքների կոմպոզիցիոն կառուցվածքը. դրանց հորինվածքային նշանակությունը» զեկուցման մեջ Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս, արվեստագիտության թեկնածու Արամ Համբարյանը *մեկնաբանեց քանդակների կոմպոզիցիոն կերտվածքը, քննության առավ տարբեր ժամանակաշրջաններին պատկանող ստեղծագործություններ: «Ակուստիկ գրաֆիկայի առանձնահատկությունները Միխայիլ Կոկժանի «Կամերային սոնատում»« բանախոսության մեջ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ* Լիլիթ Արտեմյանը *վերլուծեց ստեղծագործության տեխնիկական հիմքերի առանձնահատկությունները, կատարողական տեսանկյունից դիտարկված գեղարվեստական գաղափարը: Արվեստի ինստիտուտի ասպիրանտ* Արման Լուկասը *(ԻԻՀ) Սպահանի պատմական տների ճարտարապետության և դրանց բնական լուսավորվածության մանրամասներին վերաբերող զեկուցման մեջ կարևորեց Նոր Ջուղայի բնակելի ժառանգության ճարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, կատարեց Մեֆյան և Ղաջարական ժամանակաշրջանների Սպահանի ու Նոր Ջուղայի ապարանքների համեմատական վերլուծությունը՝ շեշտը դնելով բնական լուսավորությունը հայթայթող շենքի մասերի ճանաչողական ուսումնասիրության վրա: Տայքի X–XI դդ. ճարտարապետական հարդարանքների միջնադարյան որոշ զարդաձևերի մասին զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի ասպիրանտ* Արփինե Ասրյանը *նշեց զարդաձևերում արտահայտված մի կողմից՝ բյուզանդականի, մյուս կողմից՝ ավանդականի ազդեցությունների կարևորության հանգամանքը: Մյունխենի երաժշտության և թատրոնի կոնսերվատորիայի մագիստրանտ, արվեստագիտության թեկնածու* Արսեն Բաբաջանյանի *զեկուցումը Լևոն Չաուշյանի՝ Ավ. Իսահակյանի տեքստի հիման վրա սոպրանոյի ու դաշնամուրի համար գրված և հինգ ռոմանսից բաղկացած վոկալաշարի մասին էր:*

«Նախատիպի և պատճենի գեղագիտական ըմբռնումը հայ միջնադարյան դպրության մեջ» զեկուցման մեջ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող Արուսյակ Թամրազյանը *ներկայացրեց հայ միջնադարյան մատենագրության մեջ նախատիպերի հետ կապված անտիկ երկու ավանդույթների զարգացումը՝ կնքադրոշմի ըմբռնումը գեղագիտական ու ստեղծաբանական իր տարողությամբ, այնուհետև անդրադարձավ այս պատկերի հետագա զարգացման գուտ քրիստոնեական միտումներին: 1960–80-ականների խորհրդահայ տպագրական գրաֆիկայի ոճակերպարային և գեղարվեստական առանձնահատկությունների մասին էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու* Աշոտ Առաքելյանի *զեկուցումը: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Տաթևիկ Շախկուլյանն *անդրադարձավ Կոմիտասի ստեղծագործություններում տարածված մի համահնչյունի, որի սկզբունքը եվրոպական երաժշտության ասպարեզ է եկել ավելի ուշ. Ըստ հեղինակի վարկածի՝ ֆրանսիական երաժշտության մեջ այդ ակորդը ներմուծվել է*

կոմիտասյա և համահնչյունի ազդեցությամբ: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող Մերի Կիրակոսյանը *«Դիմանկարը Փանոս Թերլեմեզյանի արվեստում» բանախոսության մեջ անդրադարձավ նկարչի մինչ օրս չուսումնասիրված դիմանկարներին, վեր հանեց մամուլում հրատարակված նամականին՝ լուսաբանելով նկարչի կատարած մի կանացի դիմանկարի ստեղծման պատմությունը և մատնանշեց վերջինիս ճշգրիտ թվագրումը: Նույն ինստիտուտի հայցորդ* Լիլիթ Հակոբյանը *ներկայացրեց Նիկոլ Գալանդերյանի «Լալվարի որսը» օպերայի ստեղծման պատմությունն ու բեմական ճակատագիրը և առաջ քաշեց օպերան բեմադրելու անհրաժեշտության հարցը: Արվեստի ինստիտուտի ասպիրանտ* Զահրա Մալեքին *(ԻԻՀ) անդրադարձավ պարսիկ ժամանակակից նկարիչ Այդին Ադդաշլուի արվեստին: Նկարիչը ստեղծագործում է պոստմոդեռնիզմի ոճում և վերանկարում է դասական կտավները, դրանով իսկ երկրորդ անգամ վերածնելով այդ ստեղծագործությունները: «Վարիացիոն սկզբունքները հայ կոմպոզիտորների մեդիտացիաներում» զեկուցման մեջ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ* Անի Առուշանյանը *մատնանշեց մեդիտատիվ երաժշտության մեջ առկա վարիացիոն հատկանիշները և այդ ստեղծագործություններում առկա երաժշտական նյութի վարիացիոն հնարները: Դուբայի ժամանակակից ճարտարապետության միտումներին անդրադարձավ Արվեստի ինստիտուտի ասպիրանտ* Յաշար Հոսսեինզադե Նաղադեն *(ԻԻՀ):*

«Լևոն Թութունջյանի արվեստը ֆրանսիական սյուրռեալիզմի համատեքստում» զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող Մանե Մկրտչյանը *լուսաբանեց ֆրանսահայ նկարչի արվեստի աստիճանական զարգացումը և ներկայացրեց արվեստագետի սյուրռեալիստական գործերի համեմատական վերլուծությունը: Նովոսիբիրսկի ճարտարապետության և գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ* Դավիթ Նահատակյանը *«Հայաստանի և Վրաստանի զարգացած միջնադարի եռախորան բազիլիկ տաճարների ճարտարապետությունը» զեկուցման մեջ Հայաստանում և Վրաստանում գտնվող բարձրարժեք տաճարների (Օշկավանք, Իշխան, Խախտ վանք, Կումբուրդո, Բագրատի և Ալավերդիի) հետազոտության հիման վրա ցույց տվեց այս տիպի տաճարների առաջին օրինակները՝ ի հայտ բերելով զարգացման գենեզիսը և յուրահատկությունները: Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի երաժշտության ֆակուլտետի դեկանի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ, երգեցողության և խմբավարության ամբիոնի ավագ դասախոս* Իրինա Ծովյանովան *«Դիրիժորական ժեստի ձևավորման որոշ ասպեկտներ» բանախոսության մեջ քննության առավ դիրիժորական ժեստի ձևավորման մի շարք հարցեր. նշելով դիրիժորական պրոցեսի երեք հիմնական մոտեցումները, հեղինակն ուշադրությունը բևեռեց դիրիժորական տեխնիկայում անբաժանելի մաս հանդիսացող հոգեբանական և տեխնիկական կապի վրա: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի հայցորդ* Էմմա Առաքելյանի *«Ֆրանսիական կոմպոզիտորների ստեղծագործությունները Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ. Հ. Բեռլիոզ՝* “Requiem” *զեկուցումը նվիրված էր համաշխարհային երաժշտական*

պրակտիկայում սակավ կատարվող այդ բարդագույն երկի չեքիջյանական մեկնաբանությանը: Վարդգես Սուրենյանցի նորահայտ ստեղծագործություններին նվիրված զեկուցման մեջ Երևանի պետական համալսարանի դասախոս Շուշանիկ Զոհրաբյանը *ներկայացրեց գրքի նկարազարդման բնագավառում նկարչի նորահայտ էջերը, որոնք առնչվում են Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմին, ներկայացրեց Յալթայի թատրոնի համար նկարչի ստեղծած արժեքավոր թատերական էսքիզները, որոնք զեկուցողը հայտնաբերել է Մոսկվայի Բախրուշինի անվան պետական թատերական թանգարանում: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ* Սուսաննա Ղազարյանն *ուսումնասիրել էր Ա. Բաբաջանյանի «Հերոսական բալլադի» կատարողական մեկնաբանությունների համեմատական համադրությունը՝ ԵՊԿ պրոֆեսոր Կարինե Օհանյանի և նրա ուսանող Լիլիթ Մկրտչյանի կատարումների օրինակով: Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի կրտսեր գիտաշխատող* Շուշանիկ Մուրադյանի *զեկուցման մեջ լուսաբանվեց 1901–1910 թվականների Շուշվա երաժշտական կյանքը, անդրադարձ կատարվեց Քրիստափոր Կարա-Մուրզայի, Ստեփան Դեմուրյանի, Եղիշե Բաղդասարյանի, Գրիգոր Սյունիի և այլոց համերգային գործունեությանը: ԵՊԿ Գյումրու մասնաճյուղի դասախոս* Աննա Թամիրօղլյանի *բանախոսությունը բացահայտեց Ա. Բաբաջանյանի Դաշնամուրային տրիոյի երաժշտական լեզվի ու կոմպոզիցիոն առանձնահատկությունները:*

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ Լիլիթ Արսենյանը *«Դստեր կերպարը Հովհաննես Զարդարյանի կտավներում» զեկուցման մեջ վերլուծեց նկարչի ստեղծագործական հարուստ ժառանգության մեջ առանձնակի կարևորություն ունեցող և կենդանի անմիջականությամբ աչքի ընկնող այն կտավները, որոնցում պատկերված է դուստրը՝ նկարչուհի Անահիտ Զարդարյանը՝ տարբեր տարիքային փուլերում: Երևանի հուշաքարերի հորինվածքային առանձնահատկությունների մասին բանախոսության մեջ Երևանի պետական համալսարանի մագիստրանտ* Անի Հայկազունը *ներկայացրեց Երևանի հուշաքարերը՝ որպես հայ մշակույթի անբաժան մաս, որպես անցյալի հիշողությունն ամբարող և փոխանցող արտեֆակտներ՝ վեր հանելով դրանց տիպաբանական, գեղարվեստական և հորինվածքային առանձնահատկությունները ու պահպանման խնդիրը: Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող* Դավիթ Ղազարյանը *«16-րդ դարի ժապավենաձև հմայիլները» զեկուցման մեջ ներկայացրեց Մատենադարանում և Հայաստանի պատմության թանգարանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հստակեցված 19 ժապավենաձև ձեռագիր հմայիլները՝ նկարազարդման, բովանդակային, նյութի և այլ մանրամասներով հանդերձ: Արվեստի ինստիտուտի ասպիրանտ* Տաթևիկ Արշակյանը *«Բարսեղ Կանաչյան և Ավետիս Նազարյան. անտիպ նամակ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանից» զեկուցման մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց իտալահայ կոմպոզիտոր Ավետիս Նազարյանի 1964 թ. մայիսի 9-ի նամակը՝ ուղղված Բարսեղ Կանաչյանին, բացահայտեց այն դերը, որն ունեցել է Կանաչյանը Նազարյան կոմպոզիտորի կայացման գործում:*

«Իրանական թատերական շինությունների համեմատական ուսումնասիրությունը համաշխարհային համատեքստում» զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի ասպիրանտ Սառա Մալեք Մոհամմադին *(ԻԻՀ) վերլուծեց արտաքինից իրար նման երկու թատերական շենքերը՝ Տեքիե Դուլե երբեմնի թատրոնը և Լոնդոնի Ռոյալ Ալբերտ Հոլլը. դրանց ծավալատարածական վերլուծության ուսումնասիրությունից եզրակացրեց, որ դրանք ունեն տարբեր կոնցեպցիաներ:* Անի Առուշանյանն *Արմեն Սմբատյանի «Վարիացիաներին» նվիրված բանախոսության մեջ ներկայացրեց դրանք՝ որպես վարիացիոն սկզբունքի կիրառման բացարձակապես հակադիր մոտեցում, նաև վարիացիաների շատ սրամիտ մեկնաբանություն՝ իրականացված ցիկլիկ ձևում: Արվեստի ինստիտուտի ասպիրանտ* Ալիոեզա Մաջիդիանի *(ԻԻՀ) բանախոսությունը լճերի ափամերձ տարածքներում զբոսաշրջության միջավայրակայուն դիզայնի մասին էր:* Մարգարիտա Քամալյանը *«Ֆրանսիական բեմանկարչությունը 1950–60-ական թվականներին» զեկուցման մեջ դիտարկեց ֆրանսիական բեմանկարչության ընդհանուր միտումները:* Աննա Ադամյանի *«Չուխաճյանի պոլկաները» զեկուցումը բացահայտեց դաշնամուրային* “Proti Polka”*-ի և* “Polka la gaite”*-ի երաժշտական լեզվի ու կատարողական մեկնաբանության առանձնահատկությունները:*

Գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը: Նստաշրջանն անցավ ակտիվ քննարկումների և հետաքրքիր հարցադրումների մթնոլորտում:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ